Տեղեկատվական թերթիկ

«Տվյալ» ընկերություն

Ո՞վ ենք մենք

«Տվյալ»-ը (Tvyal.com) վերլուծական ընկերություն է, որն աշխատում է երկու ուղղություններով:

- Առաջինն ընկերությունների համար տվյալների համակարգերի կառուցումն է՝ հաշվետվությունների, կանխատեսումների և որոշումների աջակցության համար:
- Երկրորդը տնտեսական վերլուծությունն է՝ շաբաթական հրապարակումներ Հայաստանի տնտեսության վերաբերյալ, որոնք մեջբերում են հայկական լրատվամիջոցները:

Երկուսը հենվում են նույն մեթոդաբանության վրա: Այն, ինչ կիրառում ենք ամբողջ տնտեսության մասշտաբով, աշխատում է նաև առանձին ընկերության ներսում:

Առաքելությունը

Ընկերությունների մեծ մասն օգտագործում է իր տվյալների ընդամենը 1%-ը: Մնացածը մնում է հաշվապահական ծրագրում ու արխիվներում: Մինչդեռ **տվյալն ունի մեծ արժեք**, որը կարող է ավտոմատացված աշխատել Ձեր կազմակերպության համար՝ ապահովելով հավելյալ շահույթ: Տվյալների արդյունավետ հավաքագրումն ու վերլուծությունը նպաստում է որոշումների արդյունավետ կայացմանը և վաճառքի ծավալների աճին:

Մենք ստեղծում ենք համակարգեր, որ տվյալները մշակվեն ամեն օր՝ ինքնուրույն, առանց մարդկային միջամտության:

Համագործակցության արդյունքում կունենանք

- **Հաշվետվությունների ավտոմատացում**

Մեր ծառայությունն օգնում է Ձեզ կայացնել արդյունավետ որոշումներ, հիմնվելով տվյալների հավաքագրման և վերլուծության նորարական լուծումների վրա, որոնք ներառում են արհեստական բանականությունը և տվյալների ավտոմատացումը:

Համակարգն ամենօրյա ռեժիմով ինքնուրույն հավաքագրում է տվյալները, վերլուծում դրանք և կազմում հաշվետվություններ՝ Ձեր և արտաքին տվյալների աղբյուրների հիման վրա: Վերանում են ձեռքով արտագրումն ու դրա հետ եկող սխալները: Արդյունքում ստանում եք արդյունավետ, ճշգրիտ և ճիշտ ժամանակին որոշումների կայացում:

- **Վերլուծական վահանակներ և կանխատեսում**

Բիզնեսի զարգացման հնարավոր հեռանկարների կանխատեսում, որն իրականացվում է ճշգրիտ մոդելների և արհեստական բանականության միջոցով: Օրինակ՝ վաճառքի կանխատեսում ըստ յուրաքանչյուր հաճախորդի, պաշարի ավելի ճշգրիտ կառավարում, գնագոյացման վերլուծություն:

- **Թվային վերլուծաբան Ձեր համակարգերին կից**

Համակարգը միանում է Ձեր CRM-ին, հաշվապահական ծրագրին կամ առցանց խանութին և կատարում բարձրակարգ վերլուծաբանի աշխատանքը: Ամեն գիշեր ուսումնասիրում է Ձեր վերջին վաճառքը, իսկ ամեն առավոտ թիմին ներկայացնում կոնկրետ քայլեր՝ որ հաճախորդին զանգել, ինչ պատվիրել, որտեղ շտկել գինը: Անհրաժեշտության դեպքում համակարգն ինքն է կայացնում որոշումը: Արդյունքները ստանում եք Telegram-ով կամ ինքնաթարմացվող էջով:

Համագործակցության ձևաչափը

Նախնական անվճար քննարկում:
Տվյալների հավաքագրման և կիրառման Ձեր ընթացիկ կարողությունների և ներուժի գնահատում:

Տվյալների նախնական գնահատում:
Տվյալների նախնական գնահատումն իրականացվում է փոխադարձ գաղտնիության համաձայնագրի հիման վրա: Ուսումնասիրում ենք տվյալների կառուցվածքն ու որակը և ներկայացնում գրավոր եզրակացություն՝ ինչ է հնարավոր, ինչ ժամկետում, ինչ արժեքով:

Տվյալների սեփականություն

Համակարգը տեղակայվում է Ձեր սերվերի վրա: Տվյալները Ձեր տարածքից դուրս չեն գալիս: Ծրագրային կոդը հանձնումից հետո պատկանում է Ձեզ:

Մանրամասները՝ «Տվյալների գաղտնիության հռչակագիր» փաստաթղթում:

Կապ

Աղասի Թավադյան, հիմնադիր և ղեկավար · info@tvyal.com

tvyal.com · tvyal.com/services